

# Ջրային ռեսուրսներ

## Ներկա իրավիճակը

- ԲՄԱԳ-ի ուսումնասիրվող տարածքը ներառում է Արփա, Որոտան և Դարբ գետերի ջրհավաք ավազանները (տես ստորև քարտեզը): Արփա գետը սնում է Կեչուտի ջրամբարը և այնուհետև հոսում, միախառնվում է իր վտակ հանդիսացող Դարբ գետի հետ, իսկ Որոտան գետը սնում է Սպանդարյանի ջրամբարը: Երկու ջրամբարներն իրար հետ կապված են չգործող ստորգետնյա թունելով: Կեչուտի ջրամբարը Սևանա լճի հետ արհեստականորեն կապվում է թունելով:
- Լիդիանի աշխատանքներից առաջ իրականացված ելակետային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արփա և Որոտան գետերը գերազանցում են որոշ մետաղների համար սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:
- Տեղամասի շրջակայքում հոսող ստորերկրյա ջրերը չեն սնուցում Ջերմուկի հանքային աղբյուրները:

## Որո՞նք են հավանական խնդիրներն ու ազդեցությունները

- Մեծ բարձրության վրա որոշ աղբյուրներ կարող են ցամաքել տարվա որոշակի հատվածում՝ ստորերկրյա ջրերի հոսքի փոփոխությամբ պայմանավորված:
- Կարող է փոխվել ստորերկրյա ջրերի որակը, չնայած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազդեցությունը շատ դեպքերում աննշան կլինի: Քիչ հավանական հնարավոր ռիսկերի շարքին են դասվում կույտային տարրավազման հրապարակի վնասման կամ դատարկ ապարների լցակույտից թթվային հոսքերի արտահոսքի հետ կապված ազդեցությունները: Վերոգրյալի կանխարգելման նպատակով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

## Հավանական ազդեցությունների կառավարմանն ուղղված Ընկերության քայլերը

- Ջրահեռացման իրականացումը դեպի շրջակա միջավայր ակնկալվում է շահագործման 5-րդ տարուց ոչ շուտ, ինչից հետո կոնտակտային ջրերը կանցնեն գերխոնավ համակարգի միջով մինչև ջրահեռացումը:

- Շահագործման ընթացքում նախատեսվում է գրոյական գրոյական արտահոսք շրջակա միջավայր: ԿՏՀ-ը կառուցվելու է փորձված պաշտպանիչ միջադիր համակարգով՝ ցիանիդի լուծույթի արտահոսքը շրջակա միջավայր կանխելու համար: Նմանապես նախագծված է նաև դատարակ ապարների լցակույտը՝ բացառելու համար աղտոտված ջրերի արտահոսքը:
- Հանքի շահագործման բոլոր փուլերում, ներառյալ հետփակման փուլում իրականացվելու է ջրային ռեսուրսների մշտադիտարկում:

## Ո՞ր ազդեցություններն են լինելու հարատև

- Ենթադրվում է, որ փակումից հետո կավելանա տեղայնացած ստորգետնյա ջրերի մակարդակը: Հավանական չեն ստորերկրյա ջրերի երկարաժամկետ փոփոխություններ տեղամասի առանձնացված տարածքներում, ինչպես նաև մակերևութային ջրերի փոփոխություններ մեծ բարձրության վրա մշտապես հոսող աղբյուրներում:
- Մշտապես կփոխվեն որոշ գետակների հոսքուղիները, սակայն ջրհոսքերի մեծ մասը կմնա անփոփոխ: Որևէ ազդեցություն հաջորդող սպառողների վրա չի կանխատեսվում:

Առավել մանրամասն տեղեկատվության համար տես ԲՄԱԳ-ը, Ոչ տեխնիկական

ամփոփագիրը, <http://www.geoteam.am/>

**Ստորերկրյա ջրեր.** Երկրի ընդերքում, հաճախ հողում և ապարների խոռոչներում հոսող ջրերը  
**Մակերևութային ջրեր.** Գետնի մակերևույթի վրայով հոսող ջրեր  
**Ջրբաժան.** Հողատարածք, որն առանձնացնում է տարբեր գետեր, ջրամբարներ կամ ծովեր հոսող ջրերը:

